

ԹԱՄԱՐԱ ՄԻՆԱՍՅԱՆ

ԱՐՅԱՆԻ ԶՐԱԲԵՐԳԻ ԳԱՎԱՌԻ ԶԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ Հայքի Արցախ աշխարհի Զրաբերդի գավառը տարածվում է Մռավի լեռնաշղթայի, դաշտաբերանի, Թարթառ գետի և նրա Թրդի վտակի ձախ և Կուրակ գետակի աջ ափերին¹: Գավառն անունն ստացել է իշխանանիստ նույնանուն բերդից: Աղբյուրներում գավառը կոչվել է նաև Մեծկողմանք², Մեծկուռանք³, Չարաբերդ⁴, Թալիշ, Կուլխատան (Գուլխատան), Զիվանշիր⁵, Մխիթար Գոշի մոտ՝ Ճառաբերդ⁶, ձեռագիր աղբյուրներում՝ Չրաբերդ, Չարապերթ, Զարաբերդ, Զարապերթ, Զարիպերթ անվանաձևերով: XVII դարում մելիքության կազմավորումից հետո գավառը բաժանվում է երկու առանձին գավառի՝ Զրաբերդի և Գյուլխատանի՝ առանձին մելիքական տներով⁷:

Գավառում դպրության գործին վերաբերող ամենավաղ տեղեկությունները V դարից են և կապվում են Վաչագան Գ թագավորի անվան հետ, երբ նա Թալիշ գյուղից փոքր-ինչ հյուսիս՝ արքունի ամառանոց Գյուլթական բնակավայրում հիմնում է դպրոց, որտեղ քրիստոնեություն էին ուսուցանում քրմերի որդիներին. նրանք դառնում էին քարոզիչներ և քարոզում նոր ուսմունքը⁸: Արքան ինքն էր հաճախ դպրոց այցելում և հրճվում աշակերտների ընթերցանության մասին: Մովսես Կաղանկատվացին հաղորդում է, որ այս թագավորը ձեռնա-

¹ Թ. Հակոբյան, Սա. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Գ, Եր., 1998, էջ 417, Մ. Բարխուդարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 24 (այսուհետև՝ Արցախ), Հ. Ոսկեան, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 115 (այսուհետև՝ Արցախի վանքերը):

² Մովսես Կաղանկատացի, Պատմություն Աղուանից, տե՛ս Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, Եր., 2011, էջ 264:

³ Մովսես Խորենացի, տե՛ս Մատենագիրք Հայոց, հ. Բ, Անթիլիաս, էջ 2153, Մովսես Կաղանկատացի, էջ 140:

⁴ Մովսես Կաղանկատացի, էջ 209, Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Եր., 1961, էջ 216:

⁵ Արցախ, 24, Արցախի վանքերը, էջ 115:

⁶ Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 347:

⁷ Մ. Բարխուդարեանց, Պատմություն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 145: Զրաբերդ գավառի տերերն էին Մելիք-Իսրայելյանները, որոնց նստավայրը Զրաբերդ ամրոցն էր, Մայրաքաղաքի բերդավանն ու Հին Մոխրաքաղաքի ապարանքը, իսկ Մելիք-Աթաբեկյաններինը՝ Զրաբերդի Կուսապատ գյուղը: Գյուլխատանում իշխում էին Մելիք-Բեգլարյանները. նրանց իշխանանիստն էր Գյուլխատան բերդը և Թալիշ գյուղի մոտ՝ Հոռեկա վանքի դիմաց գտնվող ապարանքը:

⁸ Դիվան հայ վիճաբանության, Արցախ, պր. V, էջ 102:

մուխ է եղել Արցախում դպրութեան ու լուսավորութեան տարածմանը և կառուցել տվել 365 եկեղեցի. «...ըստ թուոյ աւուրց տարւոյն եկեղեցի միայն բարեպաշտն Վաչագան շինեաց յարեւելս»⁹: Վաչագան թագավորն աչքի էր ընկնում քրիստոսասեր, խաղաղասեր, գրասեր ու շինարար գործունեութեամբ: Նրա թագավորութեան տարիները հայտնի են սահմանադրական ու կրօնական բարեփոխումներով, տնտեսական և մշակութային կյանքի աշխուժացմամբ: Մշակութային կյանքի զարգացմանը նպաստել է եկեղեցաշինութեան վերելքը, քանի որ եկեղեցիներում էին ստեղծվում դպրոցներ, գրչութեան արհեստանոցներ, որոնք հետագայում վերածվում էին գրչութեան կենտրոնների:

Դավառից մեզ հասած ձեռագրական ժառանգությունը մեծ չէ: Գրչութեան օջախներ են գործել եղիշե առաքյալի, երից մանկանց վանքերում և Գյուլիստանում:

Ջրվշտիկ եղիշե առաքյալի վանքը, որ հիմնված է Մուսլ լեռան լանջին՝ մի անտառապատ ու ժայռոտ բարձունքի վրա, վաղագույն ժամանակներում հեթանոսական սրբավայր է եղել՝ Միհր Ներսեհեա¹⁰ կամ Ներսեհա ուխտ¹¹ անունով, իսկ քրիստոնեության ընդունումից հետո կոչվել է Ջրվշտիկ՝ վանքի մոտ գտնվող ջրվեժի անունով¹²: Մենաստանն առաքյալի անունով է կոչվում V դարից, երբ, ըստ ավանդության, Աղվանից Վաչագան Բարեպաշտ թագավորը Հոռեկա վանքից բերում և այստեղ է ամփոփում եղիշե առաքյալի մասունքները, վրան կառուցում մատուռ-դամբարան, որտեղ էլ վախճանվելուց հետո թաղվում է նաև ինքը¹³: 1286 թ. Վաչագան թագավորի գերեզմանի վրա Սիմեոն վանահայրը կառուցում է եկեղեցի, ինչի վկայությունն է վանքի հյուսիսարևելյան կողմում գտնվող մատուռի արձանագրությունը. «Այս է հանգիստ Վաչագան թագաւորին..., որ շինեց գեկեղեցիս առաջնորդութիւն տէր Սիմէոնի, թվին Զլե (1286)»¹⁴: Տեր Սիմոնը մահանում է 1298 թվականին և թաղվում վանքի գերեզմանատանը¹⁵: Նրանից հետո հաջորդաբար վանքի առաջնորդներ են եղել Հովհաննեսը, Վարդանը, Մատթեոսը, Կարապետ և Դավիթ եպիսկոպոսները, Մելքիսեդը, որ սպանվել է թուրքերի ձեռքով, Կիրակոսը, Ավագ Դավի

⁹ Մովսէս Կաղանկատուացի, էջ 417:

¹⁰ Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 159:

¹¹ Մովսէս Կաղանկատուացի, էջ 41:

¹² Մովսէս Կաղանկատուացի, էջ 41, Ըստ Ջալալյանցի՝ «Ջրվշտիկ» ստուգաբանվում է «Ջուր միշտ կա», տե՛ս Ս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Կ. Ա., Տիֆլիս, 1842, էջ 175:

¹³ Յ. Տաշեան, Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Միսիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 60, Ղ. Իննիկեանց, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 535-36:

¹⁴ Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիճագրութեան, Եր., 1982, էջ 110, (այսուհետև՝ Դիվան), Արցախի վանքերը, էջ 118:

¹⁵ Դիվան, էջ 108, Արցախի վանքերը, էջ 120:

Մահրասա վարդապետը: Վանքի գերեզմանատանն են ամփոփված վանքի առաջնորդներն ու միաբանները, նշանավոր Մելիք Ադամը¹⁶: Զրվշտիկ եղիշե առաքյալի վանքը գավառի եպիսկոպոսանիստն էր, և որպես սրբատեղի, հոգևոր ու մշակութային կենտրոն համախմբել է շատ հայտնի հոգևոր և աշխարհիկ անձանց: Որոշ ժամանակ վանքում են ապաստանել նաև Մաքենյաց ուխտի միաբանները¹⁷:

Վանական համալիրը բաղկացած է եկեղեցուց, գավթից¹⁸, սեղանատնից, յոթ մատուռներից, որոնք ծառայել են որպես դամբարաններ, վանական և առաջնորդական շինություններից, մելիքական պալատ-ապարանքից և օժանդակ այլ շինություններից: Համալիրն ամբողջացնում է շրջապարիսպը՝ երկու կամարակապ մուտքերով: Այստեղ ավելի վաղ գոյություն ունեցած վանական կյանքի մասին են վկայում համալիրի բակում տեղադրված XII-XIII դարերի խաչքարերն ու հուշարձանները: Արցախ աշխարհի այս հնագույն վանքը Զրաբերդի հոգևոր և մշակութային կենտրոններից էր, նաև գլխավոր ուսումնավայրը: Գրչակենտրոնից մեզ հասած ձեռագիր մատյանները XVI-XVII դարերից են, թեպետ ենթագրելի է, որ այստեղ ձեռագրեր են ընդօրինակվել նաև ավելի վաղ շրջանում:

Ըստ մի ձեռագրի հիշատակարանի՝ 1554 թվականին, Կարապետ և Դավիթ եպիսկոպոսների աթոռակալության տարիներին «յերկիրն Զրաբերդոյ՝ ընդ հովանեալ Սբ. եղիշէ առաքելոյն և երից մանկանց և Աւագ սբ. Նշանիս» ծաղկազարդվել ու կազմվել է մագաղաթյա մի Ավետարան, որ գրվել էր Շուլավերի Սբ. Մեսրոպ եկեղեցում¹⁹: Ձեռագրի նկարազարդումն ավարտվել է Աղվանից Սարգիս կաթողիկոսի մահվան տարում՝ 1555 թվականին: Մ. Բարխուդարյանցը նույնպես Սարգիս կաթողիկոսի մահվան տարին է համարում 1555 թվականը²⁰:

XVI դարի երկրորդ կեսին Զրաբերդում ձեռագիր մատյաններ էր գրում ու ծաղկում Աթանասը, որի մասին սակավ տեղեկություններ ենք ստանում իր իսկ ձեռքով գրված ձեռագրերի հիշատակարաններից: 1551 թվականին Աթանասը նկարում է Սանահինում 1534 թվականին Տերունական գրչի օրինակած Ավետարանի անվանաթերթերը, լուսանցազարդերն ու զարդագրերը²¹: 1559 թվականին «սրբասեր և հեզահոգի» Կարապետ եպիսկոպոսի խնդրանքով Աթանասը Հայսմավուրք է գրում ու ծաղկազարդում «ի կաթողիկոսութեան տեառն

¹⁶ Արցախի վանքերը, էջ 117, Առ, Իմ հիշատակարանը, Շուշի, 1890, էջ 298:

¹⁷ Ստեփանոս Օրբելեան, էջ 119:

¹⁸ Ըստ արձանագրության՝ գավիթը կառուցել է Խաչատուր շինարարը 1264 թվականին (Դիվան, էջ 106):

¹⁹ Արցախի վանքերը, էջ 120, 122, Մ. արք. Սմբատեանց, Նկարագիր Սբ. Կարապետի վանից երնջակա, Տփլիսի, 1904, էջ 146:

²⁰ Մ. Բարխուդարեանց, Պատմութիւն Աղուանից, Բ. Բ. Թիֆլիս, 1907, էջ 21:

²¹ ՄՄ 217, թերթ՝ 327, նյութ՝ մագաղաթ, 18 x13, գիր՝ բոլորգիր, տող՝ 19:

Յոհաննիսի ի յերկիրս Զարաբերդու... մեծապայծառ եւ գերահուշակ ուխտս եղի-
 շէի առաքելոց սուրբ աթոռոյն եւ առաջնորդութիւն սորա Կարապետ եւ Դաւիթ
 եպիսկոպոսացս»²²: Գլխավոր հիշատակարանում, որը վերջից թերթեր ընկած
 լինելու պատճառով թերի է, գրիչը խնդրում է հիշել ստացողին, նրա ծնող-
 ներին, եղբայրներին և քույրերին: Ստացողի անունից հիշատակագրություններ
 կան ձեռագրի բազմաթիվ էջերում, որտեղ հիշվում են ուխտի միաբաններ Կա-
 րապետ եպիսկոպոսի մորեղբայր տեր Յոհանը, տեր Մաղաքիան, իսկ վերջում
 գրիչը խնդրում է հիշել նաև իրեն ու իր ծնողներին: Հետագայի մի հիշատա-
 կարանում նշվում է Ոհան արեղան:

Աթանաս արեղան երկու տարի հետո՝ 1561 թվականին, «ի յերկիրս Զարա-
 բերդոյ, ընդ հովանեաւ սբ. եղիշէ առաքելոյս եւ երից մանկանցն Աւագայ սբ.
 Նշանիս եւ Թումայի առաքելոյս» նկարազարդում է 1560 թվականին Ղուկաս
 րաբունապետի խնդրանքով Մարգարա քահանայի և եղիա եպիսկոպոս Բերկ-
 րացու օրինակած Հայսմավուրքը²³: Մատյանի 1-241 թերթերը գրել է Մարգա-
 րա քահանան, 241 թերթից նրան շարունակել է եղիա եպիսկոպոսը: Նրանց
 աշակերտել է տեր Մինասը, իսկ Մովսես արեղան օգնել է գրչին թողլթ կոկե-
 լով: Մեկ տարի անց ձեռագիրը ծաղկելու համար տրվում է Աթանասին: Ծաղ-
 կողի հիշատակարանից երևում է, որ նա ինքնուս է և կատարելապես չի տիրա-
 պետում մանրանկարչության արվեստին, ուստի խնդրում է անմեղադիր լինել,
 որովհետև իր հնարավորության սահմաններում է կատարել աշխատանքը.
 «Անմեղադիր լերուք, զի կար մեր այս է, վարպետ ծաղկողի շէի տեսեալ» (թ.
 4բ): Այս ձեռագիրը եղել է Հովհաննես Թումանյանի անձնական գրադարանում
 (որոշ թերթերի վրա դրված է նրա անձնական կնիքը):

Աթանասից մեզ հասած հաջորդ մատյանը 1565 թվականին «ի դառն ու
 վշտաշատ ժամանակիս» երից մանկանց վանքում օրինակած Ավետարանն է²⁴:
 Ռատակես մենակյացը, որ երկիրցս գնացել էր երուսաղեմ՝ երկրպագության, եղ-
 բոր՝ անգամակ Քարիմշիմի հետ և նրա կամեցողությամբ Աթանասից խնդրում և
 ստանում են «գանառիկ մեծութիւնս և զփարթամ հարստութիւնս և զուրախու-
 թիւնս մանկանց եկեղեցոյ տերունեան աւետաբեր սուրբ Աւետարանս»՝ որպես
 հիշատակ իրենց գերդաստանի: Պարզ ու ճաշակով նկարազարդումը կատարել
 է գրիչը: Ստորին լուսանցքներում տեղ-տեղ նա կարմրագրով ցուցումներ է
 տվել, ուղղումներ արել, իսկ 7բ էջին՝ Մատթեոսի նկարի տակ ավելացրել է.
 «Խորանս դէնացել էր, յիրանց կպել, ես շէի իմացել, թողութիւն արեք»: Գրիչը
 գլխավոր հիշատակարանում առաջին անգամ նշում է ծնողներին՝ Վրդանես

²² ՄՄ 4477, ք. 608ա: Զեռագիրը գրված է թղթի վրա, 31 x 21, գիր՝ բոլորգիր, տող՝ 33:

²³ ՄՄ 6282, քերթ՝ 626, նյութ՝ թուղթ, 31 x 20, գիր՝ բոլորգիր, տող՝ 35: Տե՛ս նաև՝ Ա.
 Գեորգեան, Հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն, 9-19-րդ դդ., Գանիթէ, 1998, էջ 28:

²⁴ ՄՄ 2928, քերթ՝ 230, նյութ՝ թուղթ, 27,5 x 18, գիր՝ բոլորգիր, տող՝ 23:

քահանային և Գուլպահարին, և ուսուցչին՝ Ղուկաս վարդապետին, որից հետո հիշում է նաև Հովհաննես վարդապետին: Ստանալով մատյանը՝ Ռատակեսն այն տվել է տեր Մկրտիչին, իսկ 1745 թվականին Ավետարանը պատկանել է թաղլարցի Պակու որդի Ապաղին, որն էլ մատյանը նվիրել է Թաղլարի Ամենափրկիչ վանքին:

Տարիներ հետո՝ 1576 թվականին, Աթանասը կատարում է կաթողիկոսական պատվեր. Հովհաննես Աղվանից կաթողիկոսի խնդրանքով ծաղկագարդում է Կարապետ գրչի Գանձասարում օրինակած Սաղմոսարանը (ՄՄ 1923):

1681 թվականին «ի յերկիրս Ջրաբերդ ընդ հովանեալ Սուրբ առաքելոյս Եղիշէի ի հայրապետութեան տեառն Երեմիայի սրբազան կաթողիկոսի և առաջնորդութեան Սուրբ ուխտիս Ջրվշտկայ Յոհան եպիսկոպոսի Մեծշինեցոյ ի թագաւորութեանն շահ Սուլէյման ինքնակալին, նաև իշխող ամենայն գավառացս Աբաս ղուլի խանն», Ահարոն Մայեկացին Հակոբ քահանայի խնդրանքով արտագրել է մի Մաշտոց²⁵: 1682 թվականին «յարքեպիսկոպոսութեանն սրբոյ աթոռոյն Եղիշէի առաքելոյն՝ Յովհաննու Մեծիգեղոյ» ոմն Սարգսի կին Մարիամը Հովսեփ քահանայից խնդրել ու ստացել է մի Ավետարան և նվիրել Ջրաբերդի Սուրբ Աստվածածին եկեղեցուն, «որ է մերձ Արբոյ Երից մանկանց եւ յերկիրս Ջրաբերդոյ»²⁶: 1787 թվականին վանքում գրված մի Քարոզգիրք տիրացու Հովհաննեսը նվիրել է մեծշենցի տեր Մելիքսեթի որդի Սողոմոն վարդապետին²⁷:

Վանքի գրատունը հարստացել է նաև նվիրատվություններից: Համաձայն գավթի մույթերին պահպանված արձանագրությունների՝ ուխտի միաբաններից Գրիգորը կառուցել է Ուղտապատ եկեղեցին, գնել է մի Ավետարան և Փերթ կոչվող հողատարածքի հետ ընծայել ուխտի առաջնորդ տեր Սիմոնին և միաբանների հետ երկու ժամ պատարագ է տվել Համբարձման տոնին: Սերոբ քահանան երեք գիրք է նվիրել տեր Սիմոնին, իսկ միաբանները՝ Բարսեղի տոնին երկու պատարագ: Դավիթը և նրա կինը միաբանությունը նվիրել են մի խաչ, Առաքելոց տոնին ստացել են երեք պատարագ²⁸: 1607 թվականին մի քանի ձեռագիր է նվիրել նաև վանքի առաջնորդ «գերիմաստ եւ յոգնահանձար» Ավագ Դալի-Մահրասա վարդապետը²⁹:

Հաջորդ նշանավոր կենտրոնը, որտեղ օրինակվել են ձեռագրեր, Մուսլի լեռնաշղթայի հարավային անտառածածկ լանջին՝ նշանավոր Ջրաբերդ ամրոցի մոտ գտնվող Երից մանկանց անապատն է: Եղիշե առաքյալի վանքին մոտ լինելու պատճառով այս երկու վանքերը հիշատակարաններում հաճախ միա-

²⁵ ՄՄ 8125, քերթ՝ 303, նյութ՝ քուլթ, 15,7 x 10,7, գիր՝ բուրգգիր, տող՝ 16:

²⁶ Արցախի վանքերը, էջ 116, 123:

²⁷ Մ. Բարխուդարեանց, Աղվանից երկիր և դրախտիք, Թիֆլիս, 1893, էջ 192:

²⁸ Դիվան, էջ 106-107, Արցախի վանքերը, էջ 118:

²⁹ Արցախ, էջ 261, Արցախի վանքերը, էջ 123, Բաֆֆի, Երկեր, հ. 9, Եր., 1987՝ համապի մեկնությունները, էջ 65:

սին են հիշվում: Գլխավոր եկեղեցին 1691 թվականին եղբոր՝ Իգնատիոսի հետ կառուցել է տվել Սիմեոն Ա Խոտորաշենցի կաթողիկոսը: Վերջինս էլ այն դարձրել է Գանձասարի հակաթոռ կաթողիկոսության կենտրոն, և այդ ժամանակից սկսած մինչև 1819 թվականը շարունակվել են հակամարտությունները երկու կաթողիկոսությունների միջև, ինչը ստիպել է Ամենայն հայոց կաթողիկոսներին հանդես գալ հաշտարար միջնորդությամբ: 1664 թվականին մի արձանագրության մեջ Իգնատիոսը հիշատակվում է որպես ռաբունի. «Կերտեցաւ այս յարկ նուիրանց տանն Աստուծոյ... շինեցաւ յերկունց հարազատաց Սիմէօնի կաթողիկոսի եւ Իգնատիոսի ռաբունւոյ... ի թուականիս ՌՃԺԳ (1664) աւարտեցաւ սոյն եկեղեցին»³⁰:

Գրիչ Իգնատիոսը, որ Մեծշենում ծնված լինելու համար կոչվում էր Մեծշենցի, կրթությունը ստացել է Երից մանկանց վանքում, աշակերտել է դպրապետ Անդրեաս Զուղայեցուն, նրանից սովորել է «յոլովից զարհեստս իմաստից»: Իգնատիոսը 1661 թվականին սիրահոժար գաղափարել է «Գիրք Պիտոյիցը» Տաթևից Երից մանկանց անապատ բերված ռաբունապետ Ռհան Տաթևացուն՝ «որ է ի մեջ բանասիրաց արեգակն», ստույգ և ընտիր օրինակից, որովհետև «բնաւին անհետացեալ ի մերայինս ազգաց»³¹: Գլխավոր հիշատակարանում Իգնատիոսը հիշում է իր ուսուցչին՝ Անդրեասին, մեծ պապին՝ Հանճարին, հորը՝ տեր Սարգսին, մորը՝ Սալվարին, հորեղբայրներին, եղբայրներին, ինչպես նաև վանքի միաբաններին:

Երից մանկանց անապատից մեզ հասած ձեռագիր մատյանների թիվը ևս մեծ չէ: 1589 թվականին «չերկիրս չէնկէլին ի գիւղն Մանճրլրխին, ի դուռն Սբ. Թորոսու» Պողոս երեցր Հակոբ վարդապետի խնդրանքով գրչագրում է Գրիգոր Ծերենցի Հայսմավուրքը³²: Տարիներ անց, 1592 թվականին «ի դառն և ի նեղ ժամանակիս», երեքմանկանց վանքում ծաղկազարդումն ավարտում է Պողոս Մելտենցի եպիսկոպոսը: Նա նկարում է թեմատիկ նկարները, անվանաթերթերը (թթ. 1գ, 390ա), գլխազարդերն ու լուսանցազարդերը՝ օգտագործելով նաև արծաթ: 1700 թվականին Թաթևոսը նորոգելու է տալիս ձեռագիրը, նորոգությունը մասնակցել է նաև ժամհար Ղարիպը: Եսայի գրիչը 1619 թվականին օրինակում է Լամբրոնացու երկերի մի ժողովածու և նվիրում Երից մանկանց վանքին³³:

Աբրահամ Շաքեցի եպիսկոպոսը, ով եղել է Աղվանից ներսես հայրապետի աշակերտը, ապա դարձել նրա նոտարը կամ քարտուղարը, 1760 թվականին

³⁰ Ս. Զալալեանց, Ճանապարհորդութիւն..., Բ. Ա, էջ 178-179, Արցախի վանքերը, էջ 125, ԱԵԹ, Իմ հիշատակարանը, էջ 275:

³¹ ՄՄ 3446, քերթ՝ 369, նյութ՝ թուղթ, 15 x 9,5, գիր՝ նոսրգիր, տող՝ 19:

³² ՄՄ 1505, քերթ՝ 586, նյութ՝ թուղթ, 37,8 x 27,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 39:

³³ Հ. Աճառյան, Յուզակ հայերէն ձեռագրաց Թավրիզի, Վիեննա, 1910, էջ 81, նաև՝ Արցախի վանքերը, էջ 126:

նրա համար երից մանկանց վանքում ավարտում է մի Ձեռնագրություն մաշտոց, որի «ընտիր և ստույգ» օրինակն ու թուղթը շնորհել էր հայրապետը³⁴։ Գրիչը թերացումների համար խնդրում է ներել. «Թէ գտանիցին ի սմա սխալանս ինչ յուրեք ի տառս եւ կամ ի բառս, արասջիք արժանի ներման, քանզի ոչ եթէ կամաւ եւ գիտութեամբ են եղեալ, այլ ի մոռացմանէ տկար մտաց» (թ. 94ա), մանավանդ ժամանակներն էլ անբարենպաստ էին. «ի ժամանակս գրչութեանս եղեն սաստիկ աղմկունք եւ արհամարհ ճեթելաշարժութեան», ուստի շտապել է, որ վերջացնի. «միգուցէ թերակատար մնասցէ զսկսեալս եւ լինիցի ծաղր ի տեսողաց»։ Գլխավոր հիշատակարանում գրիչը խնդրում է հիշել սրբազան հայրապետին, իր հանգուցյալ ծնողներին՝ խոջա Զաքարիային և Խաթունին և իրեն։ Աբրահամ Շաքեցի եպիսկոպոսը Աղվանից Աթանաս կաթողիկոսի խնդրանքով մի Ձեռնագրություն Մաշտոց էլ օրինակել է Գանձասարում 1766 թվականին (ՄՄ 3971)³⁵։

1725 թվականին քյոխվա Ալլահվերդի Պանագուրցին անօրենների ձեռքից փրկել և ուխտին է նվիրել մի Ավետարան, շուրջառ ու թագ՝ որպես հիշատակ իր ծնողների, դուստրերի, որդիների, բոլոր մերձավոր ազգականների³⁶։

Ձեռագրեր են գրվել նաև Գյուլիստանում։ Այստեղից երկու գրիչ է հիշվում՝ Եսայի երեցը և Դավիթը։ Նրանց ընդօրինակությամբ երկուական ձեռագիր է հասել, որոնք պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում։

Եսայի գրչից մեզ հայտնի առաջին մատյանը Ավետարան է, որ նա գրել ու ծաղկազարդել է 1681 թվականին³⁷։ Հախնազարի և Պեկաղի որդի Եսային, որ հորեղբոր՝ Մելքումի հսկողությամբ է սովորել գրչության արվեստը, գլխավոր հիշատակարանում ակնածանքով է հիշում նրան. «Հորեղբայրն Մելքում, որ էր աշխատաւոր առաւել, քան զհայր, որով բազում աշխատեցաւ ի վերայ իմ ի մանկութենէս մինչեւ ցայսօր, որպէս յայգեգործ ի յայգոյն իւրում աշխատէ, այդպէս աշխատաւորէ ի վերայ իմ մինչեւ կարգեաց զիս» (թ. 210ա)։ Հորեղբայրը ջանացել է, որպեսզի եղբորորդին վարժ գրիչ դարձնաւ։ Ավետարանը Եսայու առաջին գործն է, նա գրել է անվարժ բոլորգրով և սխալներով։ Գրիչը խոստովանում է, որ գրչության արվեստում հմուտ չէ, ուստի ներողամտություն է հայցում. «Անմեղադիր լերուք ի սխալութենէ, որ առաջի գիրս է, չէի ուղիղ ուսուցեալ, ի փափկութիւնէս գրեցի» (թերթ 210ա)։ Ստեփանոս սարկավազն օգնել է գրչին թուղթ կոկելով. գրիչը նրան ևս խնդրում է հիշել։ Նախնական այս կրթությունից հետո Եսային այլ կրթություն ստացել է, չգիտենք, բայց 1686 թվականին՝ «ի եպիսկոպոսութեանն Վլասին Շամախեցոյ» իր գրչագրած

³⁴ ՄՄ 1078, քերթ՝ 95, նյութ՝ թուղթ, 18,2x 11,8, գիր՝ նոսրգիր, տող՝ 24-27։

³⁵ Թ. Մինասյան, «Գանձասարի գրչության կենտրոնը», *Բանբեր Մատենադարանի*, 20, 2014, էջ 223-242։

³⁶ Արցախ, էջ 43, Արցախի վանքերը, էջ 126-127։

³⁷ ՄՄ 4228, քերթ՝ 213, նյութ՝ թուղթ, 21 x 16,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 21։

երկրորդ մատյանում, որ է Մաշտոց,³⁸ նա ավելի կանոնավոր, հավասարաչափ ու գեղեցիկ է գրում, որն արդեն առաջադիմության ապացույց է: Գլխավոր հիշատակարանում նա դարձյալ հիշում է ծնողներին, հորեղբորը, նրա կնոջն ու Հովհաննես որդուն, ինչպես նաև իր որդուն՝ Ովանեսին, դստերը՝ Մարգարիտին, մյուս ազգականներին:

Դավիթ գրիչը 1689 թվականին մի Մաշտոց է օրինակել Եսայի քահանայի խնդրանքով «ի դառն և ի դժուար ժամանակի, որ պարսիկ ազգն շարժեալ և նեղացուցանէին զքրիստոնեացսն», «ի երկիրս Բարտայ՝ ի գեղս, որ կոչի Գուլլստեան՝ ընդ հովանեաւ Աբ. Աստուածածնին ու Աբ. Մինասայ՝ ի հայրապետութեանց տեառն Սիմոնի եւ Երեմիայի, ի եպիսկոպոսութեան Ուռեկայ Մօսիսի, ի իշխանութեան պարսից Բարտոյ Ապագ ղուլի խանն» (թերթ 131աբ)³⁹:

Երկրորդ Մաշտոցը «բարեմիտ և աստվածասեր» Մելիքսեթ քահանայի խնդրանքով Դավիթը նույն եկեղեցում օրինակել է 1692 թվականին⁴⁰: Մելիքսեթ քահանան ձեռագիրը նվիրել է իր ծնողներին՝ Գասպարին և Փերիին, հանգուցյալ եղբայրներ Պահաթուրի, Այդինի, Մեջլումի հիշատակին: Ստացողի անունից գրիչը հիշում է նաև նրա մյուս եղբայրներին՝ Ղազարին, Սեհրդին, Խաչատուրին, նրանց կանանց ու որդիներին, քույրերին՝ Նազլումին, Ջիջին, Սանդուխտին, ինչպես նաև տեր Մելիքսեթի կնոջը՝ Մարիամին և նրա ծնողներին՝ Կոստանդինին և Հերիքնագին, «որ մին երախտիք ունին ի վերա գրոյս» (թ. 298ա): Ձեռագրի երկրորդ ստացողն է Խաչատուր քահանան, ով 1740 թվականին նոտրգրով հիշատակարան է թողել⁴¹: Երրորդ ստացող տեր Կարապետ քահանայի հիշատակարանից տեղեկանում ենք, որ նա ձեռնադրվել է Նախիջևանի սուրբ Կարապետ վանքում 1799 թվականին Կարապետ վարդապետի ձեռամբ:

Գուլիստան գյուղում եղել է Գրիգոր գրչի օրինակած մի Ավետարան, և քանի որ բացակայել է գլխավոր հիշատակարանը, դժվար է որոշել գրչության տեղն ու ժամանակը⁴²:

ՄՄ 1338 ձեռագիրը գրվել է Մոխրաթաղում. այն Հայսմավուրք է, XVI դարավերջին մոխրաթաղցի Գրիգորի խնդրանքով օրինակել է մեծշենցի Սարգիս գրիչը, իսկ թուղթը կոկել է Ախիճանը⁴³: Գրիգորը մատյանը ստացել է «ի յիշատակ ծնողաց իւր», ապա «աշխատողաց և Մոխրաթաղա առհասարակ ամենայն ժողովրդեանն՝ մեծի և փոքոյ, քահանայից և տանուտերաց» (թ. 212ա): Ձեռագրի հետագա աշխատանքները, հատկապես նյութական միջոցները, հո-

³⁸ ՄՄ 10472, քերթ՝ 291, նյութ՝ թուղթ, 16,5 x 13, գիր՝ բոլորգիր, տող՝ 18:

³⁹ ՄՄ 9043, քերթ՝ 294, նյութ՝ թուղթ, 16,3 x 12, գիր՝ բոլորգիր, տող՝ 18:

⁴⁰ ՄՄ 1032, քերթ՝ 304, նյութ՝ թուղթ, 15,5 x 12, գիր՝ բոլորգիր, տող՝ 18:

⁴¹ Խաչատուր Բահանյան հիշում է իր ծնողներ Մկրտչին և Գուլիստին, հանգուցյալ եղբոր՝ Մատուրին, տիրացու Հակոբին, և իր հորեղբայր տեր Տերունին (թ. 297բ):

⁴² Արցախ, էջ 241:

⁴³ ՄՄ 1338, քերթ՝ 542, նյութ՝ թուղթ, 3153 x 22,5 գիր՝ բոլորգիր, տող՝ 34-38:

գացել է տանուտեր Հասանը: Մատյանի ստեղծման աշխատանքներին մասնակցել է ողջ գյուղը, ուստի գրիչը հականե-հանվանե հիշում է նրանցից շատերին: Հատկապես հիշատակության են արժանանում տանուտեր Հասանը, Իսամը և նրա մայր Խիալն, «որ բազում աշխատանք ունին ի վերայ գրքի», Խոճիկ պապը և մեծշենցի Սարգիս երեցը, որ «խիստ փափագին գիրքը, բազում անգամ գային ու երթային սիրով ու պատվով», տեր Պետրոսը, տեր Ղազարն ու տեր Հովհաննեսը, Դավիթ սարկավազը:

Երեսուն տարի Մուղնու Աբ. Կարապետ վանքի միաբան Մատթեոսի որդի Միրտիչ վարդապետը, որ ծնունդով «ի յերկրէն Աղուանից՝ ի գաւառէն Չարապերթո՛ւ ի գուղէն Մոխրաթաղո՛ւ ի յազգէն Մաթոսանց Շահնազարին», 1776 թվականին Կարինում հանդիպել և 40 ղուռուշով գնել է մատյանը և նվիրել Մոխրաթաղի Աբ. Իննմաս եկեղեցուն (ՄՄ ձեռ. 11204):

Զրաբերդի գավառում է պահվել բացառիկ արժեք ունեցող երկու հնագույն մատյան: Առաջինը ՄՄ 6202 ձեռագիրն է, որ հայտնի է Մեծշենի Կարմիր Ավետարան անունով: Ս. Զալալյանցը ձեռագիրը տեսել է Նորաշեն գյուղում⁴⁴, իսկ Մ. Բարխուդարյանցը՝ Մեծշենում⁴⁵: 1915 թվականին Գ. Հովսեփյանը մատյանն անձամբ է բերել Աբ. էջմիածին:

Ավետարանը հաստ մագաղաթի վրա բոլորագրիժ երկաթագրով 909 թվականին Կոստանդնուպոլսում գրել է Թուլթայել գրիչը: Պատվիրատուն, ըստ Գ. Հովսեփյանի, Հայոց Սմբատ Ա թագավորի եղբորորդի Աշոտ սպարապետն է⁴⁶: Առաջին ծաղկողը հայտնի չէ: Գրչության ժամանակից պահպանվել է մեկ տերունական նկար՝ Ծնունդ (թ. 1բ): Մարկոսի և Հովհաննեսի անվանաթերթերը անավարտ են և հավանաբար առաջին նկարչի գործերն են: Երկրորդ ծաղկողը Իգնատիոս Հոռոմոսցին է⁴⁷: Իգնատիոսը 1236-1242 թվականներին ավելացրել է սկզբի մագաղաթյա վեց թերթերը և կատարել խորանների և Մատթեոսի ու Ղուկասի անվանաթերթերի նկարազարդումը՝ խորանների հորիզոնական երիզներին թողնելով մի քանի հիշատակագրություն, որոնցում ակնարկ կա մոնղոլական արշավանքների մասին: Իգնատիոսը գրել է նաև Մատթեոսի և Մարկոսի ավետարանառաջները: Վերջին խորանի ներքո նկարված է խաչ, որի երկու կողմում մոմերով մոմակալներ են, իսկ խորանների գլխազարդերում՝ հյուսկեն զարդեր ու վարդյակներ: Դատելով խորանների նկարազարդումից՝ նկարիչը դիմել է զարդանկարչական վաղ ավանդներին, որը «կարող է մասամբ օրի-

⁴⁴ Ս. աբ Զալալեանց, Ճանապարհորդություն..., մասն Ա, էջ 180:

⁴⁵ Արցախ, էջ 219-220:

⁴⁶ Գ. Յովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 106-108:

⁴⁷ Գ. Հովսեփյան, «Ռգնատիոս մանրանկարիչ և Շորոտկանց տոհմը», Նյութեր և ուսումնասիրություններ, հ. Ա, Եր., 1983, էջ 250-253: Կ. Մաթևոսյան, Անի, էջմիածին, 1997, էջ 282: Ա. Գեորգեան, Հայ մանրանկարիչներ, մատենագիտություն, Թ-ԹՊ դդ., էջ 248-249:

նակի ազդեցություն հետևանք լինել, որ անպայման հին է»⁴⁸: Ձեռագիրը 1252 թվականին Ոստան քաղաքում «այլազգիներից» 25 կարմիր դեկանով գնել է Հայրապետ աբեղան և իր ծնողների հիշատակին նվիրել Սուրբ խաչ եկեղեցուն⁴⁹: Թե ինչպես է մատյանը Վասպուրականից հասել Արցախ, հայտնի չէ:

Երկրորդ մատյանը Բեգյունց Ավետարանի մագաղաթյա մասունքներն են՝ հավանաբար X-XI դդ., գրիչը Ստեփանոսն է: Ձեռագիրը գրված է բոլորագրի երկաթագրով: Ստեփանոս քահանան նկարել է ավետարանիչների պատկերները և լուսանցազարդերը: Մատյանին վերաբերող առաջին թվականը 1060-ն է: Ավետարանը, որ «ի ստէպ հնից անկատար էր մնացեալ», այս թվականին Կանչնուտ անապատի Արշարունյաց դպրոցում հայր Գավիթի ծախսերով նորոգվել, լրացվել է թերին՝ ցանկերն ու անվանաթերթերը, ապա ծաղկազարդվել ու կազմվել Հովաննես գրչի ձեռքով, իսկ ոսկերիչ Սարգիսը նկարազարդել է է խորաններն ու զարդարել արծաթով «զարծաթն գործեաց և զԱւետարանս զարդարեաց»⁵⁰: Ըստ Գ. Հովսեփյանի՝ Ավետարանի խորանների նկարազարդումը նման է VI-VII դարերի հնագույն ձևերին⁵¹: Նորոգության 1060 թվականն էլ նկատի ունենալով Գ. Հովսեփյանը ձեռագրի գրության ժամանակը դնում է 1060 թվականից առաջ⁵²: Իսկ Ա. Մաթևոսյանը կարծում է, որ ձեռագիրը գրվել է 1047-54 թվականների ընթացքում և տեղադրում է այն 1054 թվականի տակ⁵³: Ավետարանը 1272 թվականից առաջ մեծկվենցի տեր Ուզի որդի Հասանի ձեռքով փրկվել ու բերվել է Կեսարիայից և երկար ժամանակ գտնվել է Ջրաբերդի Թալիշ գյուղում՝ Բեգյունց ընտանիքի մոտ, որի պատճառով էլ ստացել է Բեգյունց Ավետարան անունը⁵⁴: Այստեղ ձեռագիրը ամբողջական վիճակով տեսել ու նկարագրել են Մ. Բարխուդարյանը⁵⁵ և Գ. Հովսեփյանը⁵⁶: Դժբախտաբար, գեղեցկագիր այս մատյանից պահպանվել է ընդամենը 18 թերթ (այժմ ՄՄ 10099):

Շատ քիչ թվով ձեռագրեր են հասել նաև գավառի այլ վայրերից: Այսպես՝ Մաղավուզ գյուղի Սուրբ Գևորգ եկեղեցու քահանայի մոտ եղել է Գրիգոր կրոնավորի խնդրանքով Հովհաննես աբեղայի գրչագրած 1575 թվագրության թղթյա մի Մաշտոց, որը 1662 թվականին պատկանել է Հովհաննես երեցին, իսկ 1729 թվականին մրջմանցի տեր Մելիքսեթի որդի Մարկոսը այն նվիրել է Գավիթ քահանային «ի երկրեն ծարայ ի գեղջէն Եանշաղէն»: Մաղավուզի եկե-

⁴⁸ Գ. Հովսեփյան, *Իգնատիոս մանրանկարիչ...*, էջ 251: Կ. Մաթևոսյան, *Անի*, էջ 282:

⁴⁹ Ա. Մաթևոսյան, *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, ԺԳ դար, Եր., 1984, էջ 267:

⁵⁰ Նույն տեղում, *Ե-ԺԲ դարեր*, Եր., 1988, էջ 100:

⁵¹ Ա. Ալպոյաճեան, *Պատմություն հայ Կեսարիոյ*, Բ, Կահիրէ, 1937, էջ 559:

⁵² Գ. Յովսեփեան, *նշվ. աշխ.*, էջ 237-238:

⁵³ Ա. Մաթևոսյան, *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, *Ե-ԺԲ դարեր*, էջ 98, ծնթ. 1:

⁵⁴ Նույն տեղում, *ԺԳ դար*, էջ 426: Արցախ, էջ 226:

⁵⁵ Արցախ, էջ 226-227:

⁵⁶ Գ. Յովսեփեան, *նշվ. աշխ.*, էջ 237-238:

ղեցում եղել է անհիշատակարան մի Ավետարան. հայտնի է միայն երկրորդ ստացողը՝ ոմն Շաղուպար⁵⁷: Մի Ավետարան էլ պահվել է Խրիսափոր գյուղի եկեղեցում. Մատթեոսի և Մարկոսի Ավետարանների վերջում պահպանված հիշատակարանից երևում է, որ այն պատկանել է ոմն Մելքում և Ապրես եղբայրներին⁵⁸: Վերինշեն գյուղի եկեղեցին ունեցել է Սարգիս գրչի օրինակած մագաղաթյա գեղեցկագիր Ավետարան⁵⁹, իսկ Ներքինշենի եկեղեցին՝ երկու թղթյա Ավետարան, որոնցից մեկը 1678 թվականին Որոտանի Լոր գյուղում գրել է Աբրահամ գրիչը: Երկրորդը չունի գլխավոր հիշատակարան, Մարկոսի վերջում պահպանվել է ստացողի հիշատակարանը, որից իմանում ենք, որ Ավետարանը ստացել են Հովհաննես միայնակյացը և իր եղբայր Հովասափը, իսկ 1628 թվականին Ավետարանը պատկանել է հարազատ եղբայրներ Հունանին և Դավիթին⁶⁰:

Այսպիսով վերը բերված տեղեկությունները վկայում են, որ Վարանդա և Ջրաբերդ գավառները եղել են հայ գրավոր մշակույթի ու գրչության հնագույն կենտրոններից, չնայած մեզ հասած մատյանները հիմնականում հետին դարերից են: Տեղի վանքերում ու եկեղեցիներին հովանու ներքո ոչ միայն գրվել, այլև պահպանվել են Հայաստանի տարբեր երկրամասերում գրված ձեռագիր մատյաններ:

Тамара Минасян

Рукописное наследие провинции Джраберд Арцаха

Провинция Джраберд в Арцахе простирается на горной цепи Мрава, в Даштаберане, на левом берегу Тартара и его притока Трги, и на правом берегу речки Курак. Это древнейший центр армянской рукописной культуры: хотя большинство дошедших до нас рукописей относятся к поздним векам, можно предположить, что рукописи здесь переписывались и в более ранние времена. Под сенью церквей и монастырей также хранились манускрипты, созданные в разных регионах Армении. Самые ранние сведения о письменности в провинции восходят к V веку и связаны с именем царя Вачагана III, который стал инициатором распространения письменности и просвещения в Арцахе, и построил там 365 церквей.

Дошедшее до наших дней рукописное наследие провинции не велико. Крупные рукописные центры функционировали в монастырях Апостола Егише и Ериц Манканц, а также в Гюлистане, где переписывали и иллюстрировали рукописи мастера Атанас, Аарон

⁵⁷ Արցախ, էջ 220-221:

⁵⁸ Նույն տեղում, էջ 243:

⁵⁹ Նույն տեղում, էջ 246:

⁶⁰ Նույն տեղում, էջ 245:

Маекаци, Овсеп, Игнатиос Мещенци, Погос Мелтенци, епископ Абраам Шакеци, Есаи и Давид. Небольшое количество рукописей дошло до нас также из других мест: из сел Мохратаг, Магавуз, Хрхапор, Вериншен и Неркиншен.

В провинции Джраберд хранились две древнейшие рукописи исключительной ценности – Евангелие, перписанное в 909 году в Константинополе писцом Тутаэлом, известное как Красное Евангелие Мещена (Мат. рук. 6202), и так называемое Евангелие Бегюнц, древность которого восходит к X веку, переписанное и иллюстрированное священником Степаносом. От этой рукописи сохранилось всего 18 листов, ныне хранящихся в Матенадаране (Мат. рук. 10099).

Tamara Minassian

L'héritage manuscrit de la province de Djraberd de l'Artsakh

La province de Djraberd de l'Artsakh, s'étend sur la chaîne de montagne de Mrav, à Dachtabéran, sur la rive gauche du Tartar et de son affluent Trghi, et sur la rive droite de la petite rivière de Kourak. Il a été un très vieux centre de la culture manuscrite arménienne, bien que les manuscrits qui nous en sont parvenus remontent aux siècles plus récents, mais l'on peut supposer que des manuscrits ont été copiés dans la région bien plus tôt. On y a également conservés des œuvres créées dans d'autres régions de l'Arménie. Les plus anciens renseignements concernant les scriptoria de la province remontent au V^e siècle, à l'époque du roi Vatchagan III qui a été l'initiateur de la propagation de l'écriture et de l'instruction en Artsakh, où il a fait construire 365 églises.

L'héritage manuscrit de cette province, arrivé à nos jours n'est pas grand. D'importants scriptoria ont fonctionné dans les monastères de l'Apôtre Eghiché et des Trois Adolescents, ainsi qu'à Gulistan où des manuscrits ont été copiés et enluminés par les artistes Athanase, Aaron Mayékatsi, Hovsep, Ignatios Metzchentsi, Poghos Metlentsi, l'évêque Abraham Chakétsi, Esaïe et David. Un petit nombre de manuscrits nous est également parvenu des autres lieux de la province, tels les villages de Mokhratagh, Maghavouz, Kherkapor, Verinchen et Nerkinchen.

Deux manuscrits très anciens et d'une valeur exceptionnelle ont été conservés dans la province de Djraberd : un Évangile copié en 909 à Constantinople par le scribe Toutaël et connu sous le nom d'Évangile Rouge de Metzchen (Ms. M6202) et un Évangile connu sous le nom de Begunts, remontant au X^e siècle, copié et illustré par le prêtre Stépanos. Seuls dix-huit folios de ce manuscrit subsistent et sont actuellement conservés au Maténadaran (Ms. M10099).